



2020-2021
ուստարի

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ
8-ՐԴ ՍԵՐՈՒՆԴ



ՄԵՐ ՄԱՍԻՆ

Դիլիջանի կենտրոնական դպրոցը ստեղծվել է 2013 թվականին «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ՀՀ Կենտրոնական բանկի հետ համագործակցության արդյունքում:

Դիլիջանի կենտրոնական դպրոցը նախատեսված է 1-9-րդ դասարանի 160 աշակերտի համար: Իր գործունեության 8 տարիների ընթացքում դպրոցն ունեցել է 80 շրջանավարտ:

Դիլիջանի կենտրոնական դպրոցը գործում է «Այբ»-ի սկզբունքներին համապատասխան:

«Այբ»-ը սովորելու մշակութաստեղծ նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման:

Փորձառու ուսուցիչներ, կրթական նոր մեթոդներ և մոտեցումներ, երեխայի բազմակողմանի զարգացումն ապահովող առարկայացանկ, լուսավոր, ընդարձակ և ուսումնական տեխնիկայով հագեցած լսարաններ՝ ահա այն ամենը, ինչ պետք է երեխաներին լիարժեք գիտելիքներ փոխանցելու, կրթության և սովորելու հանդեպ սեր արթնացնելու, դիլիջանյան իրականության մեջ նոր լուսավոր տեղ զբաղեցնելու համար:

Դիլիջանի կենտրոնական դպրոցի առաքելությունն է՝ ձևավորել առաքինի և պատասխանատու անձ, որը պատրաստ է ապագայի մարտահրավերներին և կկարողանա փոխել աշխարհը դեպի ավելի լավը: Մեր առաքելությունն է նաև տարածել լավագույն կրթական փորձն ու մշակույթը:



Դիլիջանի
կենտրոնական
դպրոց



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ



Այբ

կրթական
հիմնադրամ

ԴԿԴ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ



Մանվել Հարությունյան.

- Ես՝ հեգևո՞ղ, երբե՛ք:



Անժելա Մաթևոսյան.

- Մի՛շտ առաջ. դու
ապագա ես կերտում:



Վահան Ֆռանգույան.

- Միջին դպրոցում
անցկացրած ժամանակը
ինձ տվել է կյանքի
դասեր և լավ ու վատ
հիշողություններ, որոնք ես
երբեք չեմ մոռանա:



Լիլի Թովմասյան.

- Կյանքի հարվածները չեն փոխում,
այլ բացահայտում են քեզ:



Անուշ Մելքոնյան.

- Հիշողությունները,
որ մենք ստեղծել ենք
դպրոցում, ամբողջ
կյանքի համար են:



Հրաչուհի Անդրեասյան.

- Մի՛ հանձնվիր, գնա՛,
ինչքան էլ դժվար լինի:



Հայկ Սարգսյան.

- Կյանքը մեկն է. վայելի՛ր այն:



Սուսաննա Սաղաթեյան.

- Երազիր մեծ բաների մասին, վարվիր ճիշտ:



Աշոտ Հարությունյան.

- Հավատարմություն դժվար է գտնել, վստահությունը հեշտ է կորցնել, արարքներն ավելին են ասում, քան բառերը:



Սյուզաննա Պալույան.

- Ամեն օրը նորի սկիզբ է:



Մերի Ասատրյան.

- Եթե սկզբում հաջողության չեք հասնում, ապա կրկին փորձե՛ք:



Նանա Սանթրոսյան.

- Եթե պետք է ընտրություն կատարես ճիշտ կամ բարի լինելու միջև, ընտրի՛ր բարին:



Անժելիկա Փողիարյան.

- Դժվարը սկիզբն է...



Հարություն Նազինյան.

- Ապագան սկսվում է այսօր և այստեղ:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ



Արամ Մեիրաբյան



Արամ Փախչանյան



Արմեն Նուրբեկյան



Դավիթ Սահակյան



Համիկ Ղահրամանյան



Սոնա Կոչոյան



Վահագն Գրիգորյան

8-ՐԴ ՍԵՐՆԴԻՆ ԾԱՆԱԴԱՐՀՈՂ ԹԻՄ

Նաիրա Դալուզյան
Լիլիա Խաչատրյան
Լիլիթ Վերանյան
Աստղիկ Ավետիսյան
Արփինե Ավայան
Գոհար Կոչտոյան
Ժաննա Մեջլումյան
Դավիթ Հովհաննիսյան
Գայանե Մինասյան
Լիլիա Ալոյան
Սլավիկ Ալավերդյան
Արթուր Եղիկյան
Արմեն Ամիրխանյան
Նվեր Ղարիբյան

Գարիկ Թովմասյան
Լևոն Մաթևոսյան
Լիլիթ Մակարյան
Ելենա Պրոկոֆևա
Հասմիկ Հովհաննիսյան
Գայանե Գրիգորյան
Մարինա Ղազարյան
Սուսաննա Դավթյան
Արմինե Սիմոնյան
Սյուզաննա Մարտիրոսյան
Աստղիկ Գուլանյան
Ալվարդ Սաֆարյան
Անահիտ Ափինյան
Գայանե Ղամբարյան

Մերի Ղալայան
Վահրամ Փամբուխչյան
Միեր Ղազարյան
Հասմիկ Սողոմոնյան
Լուսինե Մլքե-Գալստյան
Տաթևիկ Ասոյան
Նունուֆար Սմբատյան
Գայանե Ստեփանյան
Արմինե Պողոսյան
Անի Հովհաննիսյան
Լիլիթ Սարգսյան
Եսթեր Իսահակյան
Հասմիկ Պետրոսյան
Սոնա Զիլինգարյան





2020-21 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ




ՀԱՆՈՒՆ
ՄԵՐ ԱՊԱԳԱՅԻ

ՀԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ

Նվիրաբերի՜ր գումար
և զարգացրո՛ւ
գիտելիքներդ

Մենք ենք, մեր սահմանները, բոլորս Արցախի համար



«ՆՎԻՐԱԲԵՐԻ՜Ր ԳՈՒՄԱՐ ԵՎ
ՀԱՐԳԱՑՐՈ՛Ւ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԴ»

Պատերազմական իրավիճակում
հայտնված մեր հայրենիքին օգնելու
համար ԴԿԴ-ն իրականացրեց
«Նվիրաբերի՜ր գումար և զարգացրո՛ւ
գիտելիքներդ» խորագրով ուսուցողական
դասընթացների շարք՝ նախատեսված
դպրոցականների և մեծահասակների
համար: Ստացված հասույթը՝
217000 դրամ, փոխանցվեց «Հայաստան»
համահայկական հիմնադրամին:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

Այս տարվա օլիմպիական
ձեռքբերումներն են 1-ին կարգի երկու
դիպլոմ «Քիմիա» և «Հայոց լեզու»
առարկաներից և մեկ գովասանագիր
անգլերենից:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵՐ ԾՆՈՂՆԵՐԸ

Ծնողների հետ
համագործակցությունը Դիլիջանի
կենտրոնական դպրոցի
կարևոր ուղղություններից է:
Այս տարի աշակերտների հետ
հանդիպումներ ունեցան և իրենց
փորձառությամբ և խորհուրդներով
կիսվեցին մեր ծնողներից՝
կիբեռանվտանգության
մասնագետ Կոմիտաս
Ստեփանյանը և ՏՏ
ենթակառուցվածքների ինժեներ
Վազգեն Թորոսյանը:

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՕՐԵՐ

Հովհաննես Թումանյանի
ծննդյան 152-ամյակի
կապակցությամբ բանաստեղծի
ստեղծագործություններով
սկսվեցին դասերը բոլոր
դասարաններում, աշակերտներն
ու ուսուցիչները դարձել էին
թումանյանական հերոսների: Օրն
ամփոփվեց ընթերցանության
ֆլեշմոբով և միայնց գիրք
նվիրելով:



ԵՎ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի կենտրոնական դպրոցի առաքելությունն է տարածել լավագույն կրթական փորձն ու մշակույթը: Այս նպատակով դպրոցը Տավուշի մարզպետարանի աջակցությամբ իրականացրեց Տավուշի մարզի փոխտնօրենների վերապատրաստման եռօրյա դասընթաց, ուսուցիչների առցանց վերապատրաստումներ և «Labbox» շարժական լաբորատորիա ծրագիրը:



«ՌԵՎԱԶԸ ԵՎ ՏՐԵՔԸ» ՄՐՑԱՇԱՐ

Համայնքային 10 և ավելի կազմակերպությունների հետ համատեղ ԴԿԴ իրականացրեց «Ռևազը և տղեքը» պատրելիֆտինգի բաց առաջնության մրցաշար՝ նվիրված արցախյան պատերազմում զոհված դիլիջանցի 24 հերոսների հիշատակին:



ՄՐՑՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՀԱՐԹԱՆԱԿՆԵՐ

Legostart ռոբոտաշինության հանրապետական մրցույթին մեր NAV և DCS թիմերը գրանցեցին հերթական հաջողությունը. մինչև 12 տարեկանների տարիքային խմբում NAV թիմը ճանաչվեց հաղթող, իսկ DCS թիմը ստացավ 2-րդ կարգի մրցանակ:

Իսկ մեր շախմատի թիմը հաղթող ճանաչվեց ՀՀ դպրոցականների շախմատի 15-րդ օլիմպիադայի Տավուշի մարզի Դիլիջանի տարածաշրջանի մրցաշարում:





Դիլիջանի
կենտրոնական
դպրոց

Ք. Դիլիջան 3905,
Մուրժական 77
Հեռ.՝ (+374 43) 54 37 07,
(+374 94) 54 37 07
welcome@dcs.am
www.dcs.am